

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ՀՄԱԾՁԲ-09/21
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ք.Երևան

25 06 2021 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՏԼՍ» ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Շ. Ղուկասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, համատեղ հիշատակմամբ /Կողմեր/, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայություն ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկվում են նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները,

բ/ Կատարողի նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 /տասը/ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն Պայմանագրի 3.3. կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3. կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայություն գինը կազմում է 350 000 (երեք հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Ծառայությունը սույն Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայության մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված վճարման ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն Պայմանագրով և սույն Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.7 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն Պայմանագիրը կազմված է 6 /վեց/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագիրը N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱԿԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիան, Խանջյան
փ./շ.3Ա/բն.15
«ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ ԲԱՆԿ» ՓԲԸ,
«Սիսիան» մ/ճ
h/h 220333331308000
ՀՎՀՀ 09217416

/ստորագրություն/
Կ.Տ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության Սիսիանի հեռուստակայանի վարչական և տեխնիկական շինության (ՀՀ Սյունիքի մարզ, Բռնակոթ համայնք) քամուց ավերված տանիքի վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների

Ընդհանուր նկարագրություն

Շինարարության նկարագիրը՝ Հեռուստակայանի վարչական և տեխնիկական շենքը քարե կրող պատերով երկհարկանի, 12,6x30,7մ հատակագծային չափերով շինություն է, որը կառուցվել է 1969թ-ին:

Նախագծման ելակետային տվյալները

Վերանորոգվող շինության հատակագիծը (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճենը)

Նախագծման առաջադրանք

Նախագծում ընդգրկել հետևյալ աշխատանքները

- Նախագծվող մասերի մանրամասն չափագրությունները
- Նախագծվող մասերի ճարտարապետաշինարարական աշխատանքային գծագրերի մշակումը
- Նախագծվող աշխատանքների համար տեխնիկական մասնագրերի պատրաստումը

Նախատեսվող աշխատանքները

- Մասնակի պահպանված փայտյա կմախքի կառուցատարրերի և թիթեղյա ծածկույթի ապամոնտաժում և պահեստավորում
- Երկաթբետոնե գոտու կոնսոլային հատվածի (~20x12սմ) քանդում և սվաղում ցեմենտ-ավազե շաղախով
- Պահպանված ջրահեռացման ձագարների և խողովակների ապամոնտաժում և նորերի տեղադրում (պատերի վրա ամրացման հանգույցների քայլը 1,0մ)
- Նոր երկաթբետոնե պարապետի կառուցում շինության ամբողջ պարագծով
- Խարամե ջերմամեկուսիչ շերտի տեղադրում (օգտագործել նաև մասնակի պահպանված խարամը)
- Բետոնե ամրանավորված հարթեցնող շերտի տեղադրում (ամրանային ցանցի բջիջը 100x100մմ) դեպի ձագարներ թեքությունների ապահովմամբ
- Երկշերտ ջրամեկուսիչ շերտի իրականացում, ներառյալ պարապետները՝ նյութի տեսակը համաձայնեցնել պատվիրատուի հետ (վերին շերտը ավազեպատ)
- Պարապետների վրա ջերմամեկուսիչ շերտը լրացուցիչ ամրացնել ներկված շերտապողպատով (ամրակների քայլը 500մմ)
- Նախատեսել դեպի տանիք բարձրացող արտաքին մետաղյա աստիճան
- Շինարարական աղբի մաքրում, իջեցում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ

Այլ պահանջներ

1. Հաշվի առնելով աշխատանքների հրատապությունը՝ նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացնել պարզ փորձաքննական դրական եզրակացությամբ՝ Պատվիրատուի հետ համաձայնեցմամբ /փորձագետը պետք է ունենա Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության /բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքների/ գործունեության լիցենզիայի՝ ճարտարապետաշինարարական փաստաթղթերի կոնստրուկտորական մաս ներդրիր/:

2. Նախագծա-նախահաշվարկային փաստաթղթերի /տեքստային և գրաֆիկական նյութերը, նախահաշիվը/ ամբողջական փաթեթը պետք է կազմվեն և ներկայացվեն հայերեն լեզվով՝ 4 /չորս/ թղթային օրինակով և 1 /մեկ/ էլեկտրոնային տարբերակով (ACAD PDF ֆորմատներով, ծավալաթերթերը, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով): Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառման միջոցով, լինեն գունավոր և ընթեռնելի:

3.Նախագծի հեղինակային հսկողության աշխատանքները կձևակերպվեն առանձին պայմանագրով:

4.Այլ փաստաթղթեր՝ շինարարական աշխատանքեր կատարելու համար պահանջվող լիցենզիաներ, աշխատանքային ռեսուրսներ, տեխնիկական միջոցներ, շինարարության (կապալի) օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներ:

Աշխատանքի կատարման ժամկետը

Սկիզբը
Պայմանագիրը կնքելու պահից

Ավարտը
7 օրացուցային օր

Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծող՝

ա. շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

բ. ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

գ. ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

դ. պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և ռուսերեն լեզուներով՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով.


Պ Ա Տ Վ Ի Բ Ա Տ ՈՒ

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան
95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ 01501898



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիան,
Խանջյան փ./շ.3Ա/բն.15
«ԱԳԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ
ԲԱՆԿ» ՓԲԸ, « Սիսիան» մ/ճ
h/h 220333331308000
ՀՎՀՀ 09217416


(ստորագրություն)
Կ.Տ.



Հավելված N 2
 « 25 » 06 2021թ. կերպով
 ՀՀՈՑ-ՄԱԾԶԲ-09/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՈՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայություն

Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրի՝ ըստ ԳՄԱ դասակարգման (ԳՄՎ)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը	
1	71241200	Սիսիանի հեռուստապայանի վարչական և տեխնիկական շինություն (ՀՀ Սյունիքի մարզ, Բռնակոթ համայնք) քանոց ավերված տանիքի վերանորոգման նախագծերի պատրաստաման և ծախսերի գնահատման փաստաթղթերի կազմման աշխատանքների	-	-	-	-	-	350 000	350 000	350 000	350 000	350 000	350 000	350 000	350 000	350 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ածողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ, ք. Երևան, Երոզ, Հովսեփյան 95
 «Ամերիքան» ՓԲԸ
 Խ/Ի 1570027609970100
 ՀՎՀՀ 01501898



(ստորագրություն)
 Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիան, Խանջյան փ./2.3Ա/քմ.15
 «ԱԳԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ, «Սիսիան» մ/Բ
 Խ/Ի 220333331308000
 ՀՎՀՀ 09217416



(ստորագրություն)
 Կ.Տ.

Պայմանագիր կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____
 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2021թ.

Պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագիր կնքման ամսաթիվը՝ « » « » 2021 թ.

Պայմանագիր համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագիր կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագիր կատարման վերաբերյալ « » « » 2021թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագիր շրջանակներում Պայմանագիր կողմը մատուցել է հետևյալ Ծառայությունը՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված Ծառայության				Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը			
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____ ստորագրություն
 _____ ազգանուն, անուն
 Կ.Տ.

« 25 » հունիս 2021թ. կնքված
 ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-09/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագիր կողմ
 «USLU» ՍՊԸ
 ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիան, Խանջյան
 փ./շ.3Ա/բն.15գտնվելու վայրը
 հհ 220333331308000
 հվհհ 09217416

Պատվիրատու
 «Հայաստանի հեռուստատեսային և
 ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ
 ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
 հհ 1570027609970100
 հվհհ 01501898

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« 06 » « 07 » 2021թ.

Պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ Սիսիանի հեռուստակայանի վարչական և տեխնիկական շինության (ՀՀ Սյունիքի մարզ, Բռնակոթ համայնք) քամուց ավերված տանիքի վերանորոգման նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման փաստաթղթերի կազմման աշխատանքներ

Պայմանագիր կնքման ամսաթիվը՝ «25» «հունիս» 2021 թ.

Պայմանագիր համարը՝ ՀՀՌՑ-ՄԱԾՁԲ-09/21

Պատվիրատուն և Պայմանագիր կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագիր կատարման վերաբերյալ «06» «հուլիս» 2021թ. դուրս գրված N P5412489635 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագիր շրջանակներում Պայմանագիր կողմը մատուցել է հետևյալ Ծառայությունը՝

Մատուցված Ծառայության								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	Սիսիանի հեռուստակայանի վարչական և տեխնիկական շինության (ՀՀ Սյունիքի մարզ, Բռնակոթ համայնք) քամուց ավերված տանիքի վերանորոգման	Սիսիանի հեռուստակայանի վարչական և տեխնիկական շինության (ՀՀ Սյունիքի մարզ, Բռնակոթ համայնք) քամուց	1	1	02.07.2021թ	02.07.2021թ	350000	հուլիս

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար	
6	Հուլիս	2021 թ.		Բ	5412489635	
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի		
6	Հուլիս	2021 թ.		Սերիա	Համար	
				Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր		[5] Կնքման ամսաթիվ		[6] Համար		
		25 Հունիս, 2021 թ.		ՀՀՈՑ-ՄԱԾՁԲ-09/21		
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)						
[7.1] ՀՂՄ կտրոնի համար						

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի							
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	9	2	1	7	4	1 6
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը							
[10] Անվանումը	«ԱՏԼԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)						
[11] Բանկային տվյալները	Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ			N 220333331308000			
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՍՅՈՒՆԻՔ ՄԻՄԻԱՆ ՄԻՄԻԱՆ ԽԱՆՁՅԱՆ Փ. 3Ա ԲՆ. 15						
[13] Լրացուցիչ տվյալներ							

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի							
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	1	5	0	1	8	9 8
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	1	8	9 8 / 1
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒԲՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)						
[17] Բանկային տվյալները	N						
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 95						
[19] Լրացուցիչ տվյալներ							
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		Համար				
	Լիազորագիր		Ամսաթիվ				

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ Շ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակակաշիքը	Միավորի գինը	Զեղչ(%)	Սյրժեքը
1	2	3	4	5	6	7
1	Միսիանի հեռուստակայանի վարչական և տեխնիկական շինության (ՀՀ Մյունիքի մարզ, Բոնակոթ համայնք) քամուց ավերված տանիքի վերանորոգման նախագծերի պատրաստման և ծախսերի գնահատման փաստաթղթերի կազմման աշխատանքներ	հատ	1	350000		350000
Ընդամենը						350000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ **GHUKASYAN SHAHEN 1609860403**

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ **PETROSYAN BELA 6405650081**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

(ստորագրությունը, անունը, ազգանունը)